

Յարգ- Ձեր որդու՝ Ալբերտ Ղարաբեշիշյանի, հետ հանցավոր սխեմայի մասնակիցներ Յրաչյա Սուքիասյանը, Լյոբով Չենչեկոն և Արմինե Բարխուդարյանի հայրը դատավճռից շատ չանցած աշխատանքի են անցել <Ստեփանավանի կոմունալ սպասարկում և բարեկարգում> նորաստեղծ ՅՈԱԿ-ում: Յրաչյա Սուքիասյանը դարձել է տնօրեն, իսկ Լյոբով Չենչեկոն գանձող, Արմինե Բարխուդարյանի հայրը՝ Խնգանոս Բարխուդարյանը վարորդ:

Ինչպե՞ս կմեկնաբանեք այս փաստը, արդյո՞ք այսպերպ վարձահատույց եք եղել նրանց՝ քրեական գործի նախաքննության ժամանակ, ինչպես նաև դատաքննության ժամանակ տված ցուցմունքների համար:

Պատասխան Ձեր նշած անձանց հետ բացառապես գործընկերային հարաբերություններ են: Ի՞նչ է նշանակում վարձահատույց լինել ցուցմունքի համար. Դուք հավանաբար գիտեք, որ նշյալ գործը անցել է երկու փուլով՝ 1- փոխհատուցում, 2- համաներում: Յիմա եթե պատճառված վնասը փոխհատուցվել է, և ըստ Էության ամեն բան պարզ է, ի՞նչ եք ցանկանում որ ասեմ: Յարցի պատասխանն այն է, որ նման պատասխանատու աշխատանքում նշանակումները չեն կարող վարձահատույցով լինել, խոսքը մի ամբողջ քաղաքի մաքրության մասին է, իսկ ես իբրև համայնքի ղեկավար՝ այս հարցում գիտեք՝ որքան եմ պահանջկոտ և չի կարելի աղբահանություն իրականացնող կազմակերպությունում որևէ նշանակում համարել նախընտրելի, որովհետև սա նոր փորձարկվող կազմակերպություն է, և հասարակությունը սպասում ու ստանում է առավելագույն արդյունք, իսկ թերացումները ազդում են քաղաքի տեսքի վրա, որը թույլ տալ չի կարելի: Ինչ վերաբերում է մեկնաբանելու ձեր առաջարկին ապա, մեկնաբանեմ հարցով՝ ի՞նչ եք ակնկալում, որ որևէ գործով անցած մարդիկ, ովքեր վերջնարդյունքում դատված չեն երբեք չաշխատեն, այն դեպքում, երբ օրենքը չի սահմանափակում նրանց՝ աշխատելու իրավունքը:

Յարգ- 15 հունվարի 2019 թվականի N 04 որոշմամբ դուք Վիրահայոց փողոց թիվ 17/1 հասցեի 0.245 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 1193.84 քմ ներքին մակերեսով ավտոտեխսպասարկման կայանի գործառնական նշանակությունը փոխել եք հյուրանոց գործառնական նշանակության: Որոշման մեջ նշված է, որ շինության գործառնական

Նշանակությունը փոփոխված է հյուրանոց գործառնական նշանակության առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ վերը նշված շինության նկատմամբ փոփոխություններ չեն կատարվել: Ինչպե՞ս է հնարավոր ավտոսպասարկման կետի գործառնական նշանակությունը փոխել և ճարտարապետահատակագծային առաջադրանքի անհրաժեշտություն չառաջանա:

Պատասխան- Ձեր կողմից ուղղված երկրորդ հարցին ի պատասխան տեղեկացնեմ, որ օրենքից որևէ շեղում չի եղել, հաշվի առնելով հարցի մասնագիտական կողմերը պատասխանում ներառում ենք որոշումներն ու դրանց օրինականությունը հաստատող օրենքի կետեր:

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայք, ք.Ստեփանավան Վիրահայոց փողոց թիվ 17/1 հասցեի, համաձայն 21.12.2014թ. տրված N 21122014-06-0028 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պետական գրանցում ստացած՝ 0.245 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա կառուցված, հասարակական նպատակային նշանակության 1193.84 քմ ներքին մակերեսով ավտոտեխսպասարկման կայան գործառնական նշանակության շինության գործառնական նշանակությունը փոխվել է՝ հյուրանոց գործառնական նշանակության, 15.06.2019թ. թիվ 04 համայնքի ղեկավարի որոշման համաձայն, որի փոփոխման և որոշման ընդունման համար ղեկավարվել ենք՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29.06.2017թ. թիվ 757-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 02.02.2002թ. Հայաստանի Հանրապետության շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոխելու մասին թիվ 88 որոշմամբ սահմանված կարգի 3 կետով, ըստ որի՝ համայնքի ղեկավարը պատվիրատուին՝ նրա կողմից ներկայացված հայտի հիման վրա, սահմանված կարգով (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, որոնց համար չի պահանջվում շինարարության և (կամ) քանդման թույլտվություն) տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք: Քանի որ որոշում կայացնելու պահին թիվ 21122014-06-0028 իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն պետական գրանցում ստացած շինության /ավտոտեխսպասարկման կայանի/ նկատմամբ փոփոխություններ իրականացված չեն եղել, շինության նպատակային նշանակության փոփոխության անհրաժեշտություն նույնպես չի եղել և հյուրանոց գործառնական նշանակության փոփոխման դեպքում շինարարության

կամ քանդման թույլտվություն տալու անհրաժեշտություն համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշման 4-րդ գլխի 27 կետի 1 ենթակետի չի պահանջվել, ըստ որի ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտների՝ I կատեգորիա, ճարտարապետահատակագծային առաջադրանք, շինարարության և (կամ) քանդման թույլտվություն չի պահանջվում:

Ըստ վերը նշվածի հիմք է ընդունվել սեփականատիրոջ կողմից ներկայացված դիմումը, 21.12.2014թ. N 21122014-06-0028 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը և համայնքի ղեկավարի կողմից կայացվել է շինության գործառնական նշանակության փոփոխության որոշում: